ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N ~~67-Ա/2~~ ~~29.01.2020թ.~~

«1124. ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ» «11001. ԳՐՔԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «1124. Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի» «11001. Գրքերի ձեռքբերում» միջոցառմամբ նախատեսված հատկացումների բաշխման ցանկը՝ համաձայն հավելվածի, և հրապարակել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական կայքում:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Նարինե Խաչատուրյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X